

ԳԵՆԵՏԻԿԱ

Հ. Բ. ԳԵՎՈՐԴՅԱՆ

ԳԱՐՆԱՆԱՅԱՆ ԿԱՐՄԻՐ ԿՈՒՆԴԻԿ ՅՈՐՆԵՆԻ ԷՐԻՆԱՅՑՈՒՄ ՍՈՐՏԻ
ԱՇՆԱՆԱՅԱՆԻ ՓՈԽՎԱՄ ԳԵՆԵՐԱՅԻԱՆԵՐԻ
ՎԵՐԱՓՈԽՈՒՄԸ ԳԱՐՆԱՆԱՅԱՆԻ

Մեր ուսումնասիրության նպատակն է եղել զարնանացան կարմիր կունգիկ ցորենի էրինացեում սորտը, որ յոթ տարի անընդհատ աշնանը ցանելու հետևանքով վերափոխվել էր աշնանացանի, զարնանը ցանելու միջոցով պարզել նրա աշնանացան լինելու կախումությունը և նրա տարրեր գեներացիաների բերքատվությունը զարնանը ցանելու դեպքում:

Մինչև այժմ Սևանի ավազանի շրջանների, այդ թվում նաև Նոր Բալագետի կոլտնտեսություններում շրջանացված զարնանացան կարմիր կունգիկ ցորենի էրինացեում սորտից ցածր բերք է ստացվում՝ 7—8 ց/հ:

Մեր ուսումնասիրությունները կատարվել են Նոր Բալագետի շրջանի Կարմիր և Սարուխան գյուղերի կոլտնտեսություններում 1950 թվականի զարնանից մինչև 1953 թվականը ներառյալ: Կարմիր և Սարուխան գյուղերի այն հողամասերը, որտեղ զբվել են մեր փորձերը, գտնվում են Սևանա լճի հարավ-արևելյան, հարավային և հյուսիսային կողմերում, ծովի մակարդակից 1950—2400 մ բարձրության վրա:

Այս գոտին իր մակրո և միկրո սելեֆով ունի տարրեր էկոլոգիական և հողակլիմայական պայմաններ: Մեր փորձերը զբվել են 8—9 զաշտային խոտազաշտային ցանքաշրջանառության սխեմայում, 2—3 կրկնողությամբ, 100—360 մ² փորձամարզերում:

Գարնանացան կարմիր կունգիկ ցորենի էրինացեում սորտը, որ ձյան տակ եղել է չորս տարի, այսինքն 4 տարի անընդհատ անջատ ցանելուց հետո, ցանվել է 1950 թ. ապրիլի 4-ին և 5-ին և կրկնվել է 1951 թ. ապրիլի 10 և 20-ին իբրև զարնանացան:

Գարնանացան կարմիր կունգիկ ցորենի էրինացեում սորտը, որ ձյան տակ եղել է մինչև վեց տարի, ցանվել է 1952 թ. զարնանը 14/4 և 26/4 և կրկնվել է 1953 թ. զարնանը երեք կրկնությամբ 20/4, 23/4 և 14/5:

Մեր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ցանքի ժամկետների ճիշտ բնորոշությունը Նոր Բալագետի շրջանների պայմաններում ունի վճռական նշանակություն: Գարնանացան կարմիր կունգիկ ցորենի էրինացեում սորտից ստացված աշնանացան գեներացիաները զարնանը ցանելիս բոլոր գոտիների համար լավագույն ժամկետը պետք է համարել ապրիլի 5—15-ը:

Վերևում նշված գեներացիաները զարնանը ցանելու դեպքում I և II գեներացիաների սերմերը պետք է ցանել առանց նախացանքային լարովիզացիայի, իսկ III, IV, V, VI և VII գեներացիաները զարնանը ցանելու դեպքում

անպայման պետք է ենթարկել նախադասքային լարովիզացիայի, ապա նոր ցանկը:

Ուսումնասիրվում է նրանով, որ I և II գեներացիաները գեռ լրիվ չեն վերափոխվել աշխանացունի, մինչդեռ մյուս գեներացիաները վերափոխվել են: Սերմի նորման վերցված է հեկտարին 180 կգ կամ 5—6 միլիոն ծլու-նակ հատիկ, իսկ ցանքի խտությունը՝ 5—6 մմ:

Յանքերի պարարտացումը և բույսերի խնամքը կատարվել է բարձր ազդեցությամբ:

Փորձնական ցանքերի նկատմամբ կատարվել են ֆենոլոգիական գիտո-ղություններ և ուսումնասիրություններ 1950—1953 թվականներին:

Այդ գիտողությունների միջոցով պարզվել է, որ Նոր Բայազետի շրջա-նի ստորին և վերին գոտիներում կոմպլեքս գործոնների կիրառումը խթանել է վերափոխման պրոցեսների սուաջացմանն ու բերքատվության բարձրաց-մանը:

Դիտողությունները կատարվել են ամբողջ վեգետացիայի ընթացքում: Դրոշմ գեներացիաների մոտ ծլումը եղել է համանման:

Գարնանը ցանված վերոհիշյալ գեներացիաների բույսերն ունեցել են տարբեր թվականական էներգիա, որը խիստ կերպով կապված է գեներացիա-նրի հասակի հետ, այն է՝ երիտասարդ գեներացիաների մոտ թվականական էներգիան ցածր է, իսկ ավելի հասակով գեներացիաների մոտ բարձր է:

Նույն օրինաչափությունը նկատվում է բույսերի փոխածություն հաս-կանիչի նկատմամբ:

Գեներացիաների բույսերի մոտ, որոնք ավելի բարձր աշխանացանու-թյան հասակ ունեն, թվականական և փոխածության աստիճանը լինում է բարձր և՛ ընդհանրապես:

Տարբեր գեներացիաների բույսերի աճման կոների և ցողունների անտո-ցիանով ներկվածության աստիճանը լինում է տարբեր: Այդ երևույթը կապ-ված է գեներացիաների հասակի հետ, այսինքն V, VI և VII գեներացիանե-րի մոտ բույսերի՝ անտոցիանով ներկվածության աստիճանը բարձր է և այդ բնորոշիական հատկանիշներով էլ բնորոշվում են նրա անվերապարձ աշխանա-ցանի անցնելու հատկությունները:

I և II գեներացիաների բույսերի աճման կոները և ցողունները չեն ներկվում անտոցիանով: III և IV գեներացիաների բույսերի աճման կոները ներկվում են մասամբ, իսկ ցողունները՝ շատ չնչին չափով, բայց V, VI, VII գեներացիաների մոտ անտոցիանով ներկվում են միմիայն աճման կոները, իսկ ցողունների ներկվածությունը չի պարզվում, քանի որ նրանք ցողուն-ներ չեն տալիս և մնում են թփակալված վիճակում մինչև աշխանալին ցրտե-րը, իսկ եթե այդ վերջին գեներացիաների սերմերը ենթարկվում են նախա-ցանքային լարովիզացիայի, տալիս են ցողուններ, որոնք անտոցիանով ներկ-ված են լինում չնչին չափով: I և II գեներացիաներում բույսերի խողովակա-կալումը, հասակակալումը, ծաղկումը և հասունացումը ստուգիչ բույսերի համե-մատությունում շուտ են տեղի ունենում, իսկ III և IV գեներացիաների մոտ դրանք ձգձգվում են, անկախ հողային և կլիմայական պայմաններից: Դրա պատճառն այն է, որ նրանք վերափոխվել են կիտաաշխանացանի, որպեսզի նրանց հասունացումը և հատկակալումը տեղի ունենան 100%-ով, պետք է ենթարկել նախացանքային լարովիզացիայի:

Մեր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ կարմիր կոնդիկ ցորենի սորտից ստացած աշնանացան գեներացիաները զարնանը ցանելիս I գեներացիայի բույսերը հասկակալվել են 100%-ով, II-ինը՝ 100%-ով, III-ինը՝ 20%-ով, IV-ինը՝ 10%-ով, V, VI և VII գեներացիաների բույսերը չեն հասկակալվել, քանի որ նրանք 100%-ով վերափոխվել են աշնանացանի:

Աշնանացան կարմիր կոնդիկ ցորենի էրինացեում սորտի գեներացիաների 1950 — 1953 թթ. զարնանը կատարված ցանքերի նկատմամբ ֆենոլոգիական զիտոդիվիզիոններ կատարելիս հաշվի առնված բույսերի բարձրությունը տարբեր գեներացիաներում և տարբեր դոմիներում եղել է տարբեր, ստուգիչ բույսերի մոտ աչն եղել է ցածր, ինչպես այլ ցույց է արված աղյուսակ 1-ում: Բոլոր գեներացիաների բույսերի մոտ հասկակալումը և հասունացումը տեղի են ունենում միաժամանակ և ստուգիչ բույսերից 3 օրով շուտ:

Կարմիր կոնդիկ ցորենի էրինացեում սորտի աշնանացան բոլոր գեներացիաները, զարնանը ցանելիս, բույսերը սնկալին հիվանդությունների նկատմամբ ցուցաբերում են բավարար իմունիտետ, քարամրկիով և փոշեմրկիով քիչ են վարակվում, ջրովի հողերում ցանելու դեպքում գեղին ժանգով շատ քիչ են վարակվում, իսկ անջրգի հողերում չեն վարակվում: Զրովի հողերում ցողունային դորշ ժանգը բույսերի վրա թույլ է օրաաճալովում, իսկ անջրգի հողերում աչն չի հաշմարելով: Ստուգիչ բույսերը վերը նշված հիվանդություններից համեմատաբար ավելի են տուժում:

Բոլոր գեներացիաների բույսերը, ստուգիչի համեմատությամբ, երաշտին լավ են դիմանում:

Կարմիր կոնդիկ ցորենի էրինացեում սորտի աշնանացան գեներացիաները զարնանը ցանելու դեպքում փարթամորեն աճելով, ճնշում են մոլախոտերին: Ստուգիչ բույսերը համեմատաբար թույլ են ճնշում մոլախոտերին:

Գեներացիաների ցանքերի համար լավ նախորդներ են հանդիսացել վաղ ցեղը, ընդեղենները և բաղձամլա թիվենանածաղկափոր խոտաբույսերը:

1950—1953 թթ. զարնանն արված ժամկետային ցանքերում բույսերի հաշվառումը կատարվել է քառակուսի մետրերով:

Դարնանը ցանված գեներացիաների բույսերը, ստուգիչ բույսերի հետ համեմատած, իրենց արմատների լավ զարգացմամբ, թփակվածան բարձր էներգիայով, ցողունների և տերևների փարթամությամբ, հատիկի հատիկների խոշորությամբ, բերքատվությամբ և հացաթխման որակով ավելի բարձր են եղել I և II գեներացիաներում:

Դարնանացան կարմիր կոնդիկ ցորենի էրինացեումի սորտից ստացված աշնանացան գեներացիաները զարնանը ցանելու դեպքում մեծ ազդեցություն են դրածում բերքատվության բարձրացման և մլուս ցուցանիշների վրա:

Սեանի աճագանի շրջանների կոլտնտեսություններում մշակվող կարմիր կոնդիկ ցորենի էրինացեում սորտը տարիներ շարունակ ցածր բերք է տվել, մինչդեռ այդ նույն սորտը անսովոր պայմաններում դաստիարակելու դեպքում տալիս է բարձր բերք:

Աղյուսակ 1-ում բերված տվյալները ցույց են տալիս, որ աչն դեպքում, երբ աշնանացան կարմիր կոնդիկ ցորենի էրինացեում սորտը ցանվում է զարնանը, նրանից ստացված բույսերը շուտ են հասունանում, խորշակներից

Յանքի ժաժկետների և դեներացիաների ազդեցությունը բույսերի զարգացման
ցուցանիշների ու բերքատվության բարձրացման վրա

Յ ա ն ք ի տ ա ր ի ն

Գննելու օրացվածներ	Գննելու ժամկետը	1 9 5 0 թ.								Գննելու օրացվածներ	Գննելու ժամկետը	1 9 5 3 թ.								Գննելու օրացվածներ	Գննելու ժամկետը
		Լրիվ հասունացում	բույսերի բարձր. սմ-ով	ձեկ հասկի			հատիկի զանգված	1000 հատիկի զանգված	Բ/Բ ձեռքով			Լրիվ հասունացում	բույսերի բարձր. սմ-ով	ձեկ հասկի				1000-հատիկի զանգված	Բ/Բ ձեռքով		
				հեղուկ գ-ով	երկարությունը սմ-ով	հատիկի զանգված								հեղուկ գ-ով	հատիկի զանգված	հեղուկ գ-ով	երկարությունը սմ-ով				
I	5/4	15/8	75	0,9	3,4	0,60	24	28,5	25,0	I	20/4	18/8	78	0,1	3,2	0,76	27	29,9	30,5		
	5/5	20/8	68	0,9	3,5	0,53	26	27,8	24,6		5/5	20/8	75	1,0	3,3	0,80	28	27,8	21,4		
II	5/4	15/8	72	0,8	3,2	0,54	25	26,1	24,2	II	20/4	18/8	80	1,0	3,4	0,80	26	29,6	25,8		
	5/5	20/8	66	0,8	3,4	0,52	27	24,6	23,8		5/5	20/8	75	0,9	3,5	0,80	29	28,9	25,8		
III	5/4	15/9	64	0,7	3,5	0,52	26	26,1	2,9	III	20/4	20/9	76	0,9	3,4	0,70	75	28,5	2,5		
	5/5	25/9	64	0,8	3,6	0,52	29	23,9	2,11		5/5	30/9	72	0,1	3,7	0,76	25	28,5	1,9		
IV	5/4	15/9	63,0	0,8	3,6	0,48	28	24,3	00,1	IV	20/4	20/9	74	0,9	3,6	0,61	28	28,7	0,1		
	5/5	25/9	60	0,7	3,7	0,50	31	23,5	00,1		5/5	30/9	88	0,8	3,8	0,79	26	26,4	0,1		
Ստուգել	5/4	20/8	70	0,8	3,3	0,59	23	26,5	19,0	V	5/5	—	21	—	—	—	—	—	—		
	5/5	25,8	68	0,7	3,4	0,50	24	25,5	16,0		20/4	—	15	—	—	—	—	—	—		
										VI	5/5	—	15	—	—	—	—	—	—		
											20/4	—	15	—	—	—	—	—	—		
										VII	5/5	—	16	—	—	—	—	—	—		
											20/4	22/8	60	0,9	3,1	0,62	26	26,4	24,0		
										Ստուգել	5/5	24/8	70	0,9	3,7	0,64	27	27,5	16,5		

չեն տուժում, երաշտին լավ են դիմանում, մինչդեռ ալդ հատկանիշները թույլ են արտահայտվում սառցիչ բույսերի մոտ:

Աղյուսակ 1-ում բերված տվյալները ցույց են տալիս, որ կարմիր կոնդիկ ցորենի էրինացիում սորոտից ստացված գեներացիաները զարնանը ցանելու դեպքում բույսերի թփակալման էներգիան բարձր է լինում՝ հասկերը խոշոր, հասկի հասկիկում՝ 3—4 հատիկ (սառցիչինը՝ 2—3 հատիկ), 1000 հատիկի կշիռը 28,9 գ (սառցիչինը՝ 26—27,5 գ):

Ինչպես երևում է աղյուսակ 1-ից, սառցիչի 20/4-ի ցանքից ստացվել է 24,0 ց/հ, 5/5-ի ցանքից՝ 16,5 ց/հ, իսկ III, IV գեներացիաների բերքատուրությունը ցածր է. V, VI և VII գեներացիաներից բերք չի ստացվել, դրա պատճառն այն է, որ վերևում թվարկված գեներացիաների բույսերի սերմերի նախացանքային լարովիզացիա չենք կատարել նպատակ ունենալով պարզելու, թե որ գեներացիան է անվերադարձորեն անցել աշնանացանի:

Մեր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ V, VI և VII գեներացիաները 100%-ով անվերադարձորեն վերափոխվել են աշնանացանի, III և IV գեներացիաները դեռ 10—15%-ով իրենց մեջ պահպանում են գարնանացանություն հատկանիշները, իսկ I և II գեներացիաները հանդես են գալիս որպես գարնանացաններ:

Պետք է նշել նաև, որ զարնանացան կարմիր կոնդիկ ցորենի էրինացիում սորտի վերափոխումը աշնանացանի և ընդհակառակը՝ կապված է տարվա կլիմայից. եթե ջերմաստիճանը ցածր է, բույսերը շուտ են վերափոխվում աշնանացանի և ընդհակառակը:


Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ III և IV գեներացիաների բույսերի հասունացման պրոցեսն ընթանում է դանդաղ. դա պետք է բացատրել նրանով, որ ալդ բույսերը զտնվում են աշնանացանի և գարնանացանի միջև փոփոխման պրոցեսում: Ալդ գեներացիաների բույսերի հասկերը երկար են լինում I և II գեներացիաների բույսերի հասկերի համեմատությամբ, բայց 1000 հատիկի կշիռը լինում է պակաս: Ինչև բերքահավաքը նրանց հատիկները լինում են կաթնամոմալին վիճակում, ուստի նրանց 1000 հատիկի կշիռը լինում է պակաս: Իսկ չհասակաված բույսերը մինչև սառնամանիքների վրա հասնելը զտնվում են իրենց բուռն աճման պրոցեսում, թփակալած վիճակում:

Նույն վիճակում են գտնվում V, VI և VII գեներացիաները, որոնք բուրդովին չեն հասկակալում:

Ֆենոլոգիական դիտողությունների, լարորատոր անալիզների և բերքատվության վերաբերյալ մանրամասն տվյալները բերված են աղյուսակ 1-ում, իսկ նկ. 1-ում բերված են ձմեռը ձյան տակ անցկացրած բույսերը ըստ գեներացիաների:

Նկ. 2-ում բերված են աշնանացանի վերափոխված գեներացիաների գարնանացանից ստացված բույսերը:


Գեներացիաներ ասելով պետք է հասկանալ այնպես, երբ գարնանացան կարմիր կոնդիկ ցորենի էրինացիում սորտը ցանում ենք աշնանը և մեկ տարի մնում է ձյան տակ, նրանցից ստացված սերմերն անվանում ենք I գեներացիա, եթե նա երկու տարի է մնում ձյան տակ, անվանում ենք II գեներացիա և այսպես շարունակվում է մինչև VII գեներացիան, որը ձյան տակ անց է կացրել յոթ տարի:



Նկ. 1.

Գարնանացան կունդիկ ցորենի վերափոխումը աշնանացանի:
0 — ստուգիչ (գարնանացան).

1, 2, 3, 4, 5, 6, 7 — աշնանացան ղեներացիաները:



Նկ. 2.

Աշնանացան կարմիր կունդիկ ցորենի ղեներացիաների վերափոխումը գարնանացանի:
0 — ստուգիչ (գարնանացան).

1, 2, 3, 4, 5, 6, 7 — աշնանացան ղեներացիաների գարնանացանից
ստացված բույսերը 1-ից մինչև 7 ղեներացիան:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մեր ուսումնասիրություններից պարզվում է, որ Նոր Բայազետի շրջանի պայմաններում հնարավոր է ցանքի տարբեր ժամկետներում գարնանացան կարմիր կունդիկ ցորենի էրինացեում սորտը անսովոր պայմանների մեջ զննելով՝ վերափոխել աշնանացանի, իսկ ստացված աշնանացանը վերափոխել գարնանացանի և ստանալ բարձր բերք:

2. Առանց նախացանքային լարովիզացիայի կարելի է գարնանը ցանել I և II զեներացիաները, իսկ մնացած զեներացիաները, գարնանը ցանելու դեպքում, պետք է ենթարկել նախացանքային լարովիզացիայի:

3. Բոլոր զեներացիաները թե՛ գարնանը և թե՛ աշնանը հնարավոր է ցանել Անտի ավազանի բոլոր գոտիներում՝ ծովի մակարդակից 2050—2400 մ բարձրության վրա:

4. Աշնանը ցանած գարնանացան կարմիր կունդիկ ցորենի էրինացեում սորտը գարնանը ցանելու դեպքում, ստուգիչի համեմատությամբ, տալիս է բարձր բերք:

5. Գարնանացանից աշնանացան և ընդհակառակը փոխող բույսերը ցույց են տալիս բարձր կենսունակություն:

Հայկական ՍՍՌ-ի
Նոր Բայազետի շրջան

Ստացվել է 15. XI 1956 թ.

А. Б. ГЕВОРКЯН

ВОССТАНОВЛЕНИЕ ИЗМЕНЕННЫХ ОЗИМЫХ ГЕНЕРАЦИЙ
ЯРОВОЙ ПШЕНИЦЫ КРАСНЫЙ КУНДИК
ВНОВЬ В ЯРОВЫЕ

В ы в о д ы

Целью наших исследований было путем высева весной выявить устойчивость озимости и урожайность различных генераций яровой пшеницы красный кундик сорта Эринацеум, которая в течение шести лет постоянно засеивалась осенью, в результате чего превратилась в озимую.

Опыты проводились в Нор Баязетском районе Армянской ССР и привели нас к следующим выводам:

1. Засеивая в различные сроки и, ставя в необычные условия, яровую пшеницу красный кундик можно превратить в озимую, а полученную озимую пшеницу вновь изменить в яровую и получать высокий урожай.

2. Без предпосевной яровизации весной можно сеять первую и вторую генерации, а остальные генерации при посеве весной следует подвергать предпосевной яровизации.

3. Все генерации возможно сеять как весной, так и осенью во всех зонах Севанского бассейна на высоте 2050—2400 м над уровнем моря.

4. Засеянная осенью яровая пшеница красный кундик, при посеве весной, по сравнению с контролем, дает высокий урожай.

5. Измененные из яровых в озимые, и наоборот, растения показывают высокую жизнеспособность.